

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

ՀՀ Էկոնոմիկայի նախարարության
«Բանջարաբուստանային և տեխնիկական
մշակաբույսերի գիտական կենտրոն» ՓԲԸ-ի
տնօրեն, գյուղ.գիտ.դոկտոր, պրոֆեսոր՝

 Գ. Ժ. ՍԱՐԳՍՅԱՆ

« 20 » օգոստոսի 2025թ.

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Կարեն Արթուրի Ղարախանյանի «Հողի մշակության համակարգերի արդյունավետության գնահատումը Հրազդանի տարածաշրջանում աշնանացան ցորենի օրինակով» թեմայով ատենախոսության վերաբերյալ՝ ներկայացված 2.01.01 «Ընդհանուր երկրագործություն, հողագիտություն, հիդրոմելիորացիա, ագրոքիմիա և ագրոէկոլոգիա» մասնագիտությամբ, գյուղատնտեսական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Մեր ժամանակներում հասարակության առջև ծառացած կարևորագույն խնդիրներից մեկը երկրագնդի բնակչությանը որակական բարձր հատկանիշներով օժտված սննդով ապահովելն է, քանի որ դրանց բաղադրությունից, քանակից և որակից է կախված օրգանիզմի աշխատունակությունը, առողջությունը, վերարտադրողական ունակությունը: Արտադրանքի ավելացումը հնարավոր է ագրոցենոզների արտադրողականության բարձրացման միջոցով: Հողի մշակության համակարգերն ունեն վճռորոշ դեր գյուղատնտեսության կայուն զարգացման, բերքատվության բարձրացման և հողերի դեգրադացիայի կանխման գործում և ճիշտ մշակության մոտեցումների վերանայում և արդիականացում: Արդյունավետ հողի մշակության համակարգերը պետք է լինեն հարմարվող, կայուն և գիտականորեն հիմնավորված: Հետևաբար ցանկացած արդյունավետ ագրոտեխնիկական միջոցառումներ, որոնք կնպաստեն հողերի բերրիության պահպանմանը և մշակաբույսերի բերքատվության բարձրացմանն ու ատացված արտադրանքի ինքնարժեքի իջեցմանը, կարևոր են ու արդիական:

Հետազոտության նպատակը և խնդիրները

Հետազոտությունների նպատակն է եղել ուսումնասիրել Կոտայքի մարզի Ֆանտան համայնքի անջրդի պայմաններում հողի մշակման և հողաբարելավիչների կիրառման տարբեր եղանակների ազդեցությունը աշնանացան ցորենի արդյունավետության վրա: Հետազոտությունների նպատակին հասնելու համար ատենախոսը խնդիր է դրել ուսումնասիրել և պարզել հողի մշակման տարբեր եղանակների, ինչպես նաև հանքային, օրգանական պարարտանյութերի և բնական հանքային հանքատեսակ բենտոնիտի կիրառման ժամկետների ազդեցությունը աշնանացան ցորենի աճի, զարգացման և ֆենոփուլերի անցման տևողությունների վրա, բույսերի ցրտադիմացկունությունը, բույսերի կողմից մակրոսնդատարրերի /NPK/ կուտակման դինամիկան և բերքի հետ /հատիկ, ծղոտ/ դրանց օտարումը, բերքատվության և հատիկի որակական ցուցանիշները և տնտեսական արդյունավետությունը:

Հետազոտության գիտական նորույթն ու գործնական նշանակությունը

Ատենախոսը առաջին անգամ Կոտայքի մարզի Հրազդանի տարածաշրջանի Ֆանտան գյուղի անջրդի երկրագործության պայմաններում համալիր ուսումնասիրությամբ բացահայտել է հողի մշակման տարբեր եղանակների և դրանց համադրությամբ հանքային պարարտանյութերի ($N_{60}P_{60}K_{60}$) և կենսահումուսի (3,5 տ/հա) համարժեք չափաքանակների, բենտոնիտի կիրառման (3,0տ/հա) ժամկետների ազդեցությունը աշնանացան ցորենի արդյունավետության վրա: Հետազոտության արդյունքների հիման վրա ատենախոսը ներդրման է առաջարկել հողի մշակման միայն փխրեցման (10-12 սմ) եղանակը և այդ եղանակում հաստատված պարարտանյութերի ու հողաբարելավիչի կիրառման ժամկետները:

Արենախոսության կառուցվածքը և ծավալը

Ներկայացված ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, հինգ գլուխներից, ընդհանուր եզրակացություններից, գործնական առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Այն պարունակում է 12 աղյուսակ, 8 գծապատկեր: Աշխատանքի ընդհանուր ծավալը կազմում է 103 էջ, ներառյալ օգտագործված գրականության ցանկը, որը ընդգրկում է 164 գրական աղբյուր:

Ատենախոսության հիմնական բովանդակությունը

Հեղինակը ներածական բաժնում հիմնավորել է ուսումնասիրվող հարցերի կարևորությունը, ատենախոսության թեմայի արդիականությունը, ներկայացրել հետազոտության նպատակը, խնդիրները, գիտական նորույթը և գործնական նշանակությունը:

Առաջին գլխում ատենախոսը մանրամասնորեն ներկայացրել է Կոտայքի մարզի Հրազդանի տարածաշրջանի բնակլիմայական պայմանների առանձնահատկությունները:

Երկրորդ գլխում ատենախոսը կատարել է հայրենական և արտասահմանյան մի շարք հետազոտողների կողմից գրականության բազմակողմանի վերլուծություն, հանգամանորեն ներկայացրել է գրականության ակնարկ հացահատիկային մշակաբույսերի ցանքերում հողի մշակման, հանքային և օրգանական պարարտանյութերի կիրառման արդյունավետության մասին:

Ատենախոսության երրորդ գլխում հեղինակը ներկայացրել է հետազոտությունների նյութը, մեթոդները, որոնց օգնությամբ կատարվել է լայնածավալ հետազոտական կարևոր նշանակություն ունեցող աշխատանք:

Հեղինակը ատենախոսության չորրորդ գլխում առանձին 6 ենթագլուխներով ներկայացրել է հողի մշակման տարբեր եղանակների /փոցխում, միայն փխրեցում, խոր վար / և այդ եղանակներում հանքային պարարտանյութերի / $N_{60}P_{60}K_{60}$ /, կենսահումուսի /3,5 տ/հա/ համարժեք չափաքանակների ֆոների վրա բենտոնիտի կիրառման /3,0տ/հա/ ժամկետների ազդեցությունը աշնանացան ցորենի ցրտադիմացկունության, աճի, զարգացման, ֆենոփուլերի անցման, մակրոսննդատարրերի դինամիկայի, բերքի հետ դրանց օտարման, հատիկի և ծղոտի բերքի քանակի, կառուցվածքային տարրերի, հատիկի որակական ցուցանիշների վրա:

Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ հողի մշակման եղանակներով պայմանավորված ամենաբարձր ցրտադիմացկունություն ապահովել է հողի միայն մշակումը փխրեցման /10-12սմ/ եղանակով իրականացնելու դեպքում, որտեղ աշնանացան ցորենի ցրտահարված բույսերի թիվը կազմել է 12,0-12,6%, իսկ դրանց ֆոների վրա բենտոնիտի կիրառությունը աշնանը, զարնան համեմատ հողի մշակման բոլոր եղանակներում 3,9-4,2 %-ով բարձրացել է դիմադրողականությունը

ցրտահարությունների նկատմամբ: Հողի միայն մշակումը փխրեցման /10-12սմ/ եղանակի կիրառման դեպքում նպաստել է հողի ագրոֆիզիկական և ագրոքիմիական և օդաջրային հատկությունների բարելավմանը: Այս տարբերակում հատիկի բերքի հավելումը կազմել է 3,0-4,0g/հա:

Հետազոտողը պարզել է նաև, որ հողի մշակման եղանակը էական փոփոխություններ չի առաջացրել սննդատարրերի ելի վրա:

Հեղինակը եկել է եզրահանգման, որ հանքային պարարտանյութի և կենսահումուսի համարժեք չափաքանակների ֆոնի վրա բենտոնիտի միևնույն չափաքանակի /3,0 տ/հա/ կիրառման նորման աշնանը, առավել բարերար ազդեցություն է թողել ցորենի աճի ու զարգացման, բերքի քանակի և որակի վրա, քան զարնան կիրառությունը:

Ատենախոսության հինգերորդ գլխում հաշվարկվել է հողի մշակման տարբեր եղանակների, դրանց վրա պարարտանյութերի և բենտոնիտի կիրառման տարբեր ժամկետների ազդեցությունը աշնանացան ցորենի տնտեսական արդյունավետության վրա:

Հաշվարկները ցույց են տվել, որ առավել նպատակահարմար է կիրառել հողի միայն մշակումը փխրեցման /10-12սմ/ եղանակը, հատկապես աշնան կիրառման դեպքում: Այս պայմաններում կենսահումուս 3,5 տ/հա+ բենտոնիտ 3,0 տ/հա տարբերակը ապահովել է առավելագույն /330 հազ.դրամ/ շահույթ, և շահույթաբերություն /46,5%/ :

Ուսումնասիրությունների տվյալները ավելի հավաստի լինելու համար ատենախոսի կողմից Կոտայքի մարզի Հրազդանի տարածաշրջանում /անջրդի երկրագործության պայմաններում/ կատարվել են արտադրական փորձարկումներ, որի արդյունքում ատենախոսի կողմից առաջարկվել է հողի մշակումն իրականացնել միայն փխրեցման եղանակով 10-12սմ խորությամբ և պարարտացումը կատարել հանքային պարարտանյութերի կամ կենսահումուսի համարժեք չափաքանակների ֆոնի վրա բենտոնիտի 3տ/հա նորմայով աշնան կիրառմամբ:

Կարեն Ղարախանյանի ներկայացրած ատենախոսությունը գիտաարտադրական բնույթի հետաքրքիր աշխատանք է, կան բավականին նորույթներ, առաջարկություններ, սակայն հարկ ենք համարում նշել որոշ դիտողություններ:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

1. «Երկրագնդի բնակչության թվաքանակի կարգավորումը» արտահայտությունը սխալ է, քանի որ այն ակամա հնչեցնում է բնակչության թվաքանակը վերահսկելու կամ սահմանափակելու գաղափարը: Իրականում, գլոբալ մարտահրավերը ոչ թե բնակչության թվաքանակի «կարգավորումն» է, այլ սննդային ապահովության և անվտանգության ապահովումը աճող բնակչության պայմաններում (էջ 3):
2. Ատենախոսության հեղինակը ուսումնասիրությունը կատարել է «Բեզոստայա» աշնանացան ցորենի սորտի վրա, որը բավականին հին է, Հայաստանում գրանցվել է 1959 թվականին: Անհրաժեշտ է հիմնավորել, թե ինչու է ընտրվել այս սորտը, այն դեպքում, երբ վերջին 10 տարվա ընթացքում հանրապետությունում շրջանացվել է աշնանացան ցորենի 14 նոր սորտ, իսկ Հայաստանի Հանրապետությունում օգտագործման թույլտվություն ունեցող բույսերի սորտերի ցանկը ներառում է ցորենի 77 սորտ, և ինչքանով են արդյունքները կիրառելի արդի սելեկցիոն կամ արտադրական պայմաններում (էջ 5):
3. Ատենախոսության հեղինակը հաճախ օգտագործում է «պարենային ապահովություն» և «պարենային անվտանգություն» տերմինները, որոնք տեքստում կիրառվում են ոչ ճիշտ իմաստով: Պետք է հաշվի առնել, որ պարենային ապահովությունը գլոբալ մարտահրավեր է, որը միտված է բնակչությանը սննդամթերքով բավարար մատակարարմանը, իսկ պարենային անվտանգությունը դրա բաղադրիչն է, որը վերաբերում է արտադրության անվտանգությանն ու սննդի որակին: Բերքատվության աճը առնչվում է պարենային ապահովությանը, իսկ թունաքիմիկատների և հանքային պարարտանյութերի նվազեցված կիրառումը նպաստում է պարենային անվտանգությանը: Հաշվի առնելով վերոգրյալը, գտնում ենք, որ ատենախոսության տեքստում այս երկու հասկացությունները հստակ տարբերակված չեն:
4. Իրականացված հետազոտություններում որպես ստուգիչ օգտագործվել է առանց պարարտացման տարբերակը: Ակնհայտ է, որ փորձարարական ցանկացած տարբերակ արդյունքներով գերազանցելու է ստուգիչը՝ պարարտանյութերի բացակայության պայմաններում: Ավելի տրամաբանական կլիներ, եթե որպես

ստուգիչ կիրառվեր նաև տվյալ տնտեսությունում ֆերմերների կողմից սովորաբար կիրառվող ագրոտեխնիկական միջոցառումների և պարարտացման նորմերի համակցությունը:

Ե Ձ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Գնահատելով Կարեն Արթուրի Ղարախանյանի ատենախոսական աշխատանքը, կարելի է եզրակացնել, որ ատենախոսությունում բարձրացված հարցերն արդիական են և լուսաբանված են անհրաժեշտ խորությամբ: Ատենախոսությունն իրենից ներկայացնում է ավարտուն գիտական աշխատություն, որը կատարված է գիտական պատշաճ մակարդակով: Տպարված 7 գիտական հոդվածները և ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը և ընդգրկում է դրա հիմնական դրույթներն ու արդյունքները:

Ատենախոսությունը քննարկվել է ՀՀ Էկոնոմիկայի նախարարության «Բանջարաբոստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոն» ՓԲԸ-ի Գիտական խորհրդի 2025 թ.-ի օգոստոսի 20 -ի թիվ 7 նիստում և արժանացել է դրական գնահատականի:


Բանջարաբոստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոնի
գիտական խորհրդի նիստին մասնակցել են

	Ա.Ա.	Գիտական աստիճանը
1	Գ. Սարգսյան	Գյուղատնտեսական գիտ. դոկտոր, պրոֆեսոր
2	Լ.Թադևոսյան	Գյուղատնտեսական գիտ. թեկնածու
3	Ի. Ծերեթելի	Գյուղատնտեսական գիտ. դոկտոր
4	Ա.Փահլևանյան	Կենսաբանական գիտ. թեկնածու
5	Գ.Մարտիրոսյան	Կենսաբանական գիտ. թեկնածու
6	Ռ. Բալայան	Գյուղատնտեսական գիտ. թեկնածու
7	Կ. Սառիկյան	Գյուղատնտեսական գիտ. թեկնածու

Կարեն Արթուրի Ղարախանյանի «Հողի մշակության համակարգերի արդյունավետության գնահատումը Հրազդանի տարածաշրջանում աշնանացան ցորենի օրինակով» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից սահմանված թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, ունի գիտաարտադրական կարևոր նշանակություն, իսկ ատենախոսության հեղինակն


արժանի է գյուղատնտեսական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը՝ Զ.01.01– “Ընդհանուր երկրագործություն, հողագիտություն, հիդրոմոլիորացիա, ագրոքիմիա և ագրոէկոլոգիա” մասնագիտությամբ:

Բաց և պաշտպանված գրունտի սելեկցիայի, սերմնաբուծության և հունքի վերամշակման բաժնի վարիչ, կենս.գիտ. թեկնածու՝




Գ.Ա.Մարտիրոսյան

Բույսերի կենսատեխնոլոգիայի, ֆիտոպաթոլոգիայի և կենսաքիմիայի լաբորատորիայի առաջատար գտ.աշխատող, կենս.գիտ. թեկնածու՝



Ա.Է.Ավազյան

Գ.Ա.Մարտիրոսյանի և Ա.Է.Ավազյանի ստորագրությունները հաստատում եմ , գիտ. քարտուղար, գյուղ.գիտ. թեկնածու՝



Լ.Ա.Թադևոսյան

